

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ
1600-ԱՍՅԱԿԻՆ

2005 թ. սեպտեմբերի 13-16-ը Երևանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին: Գիտաժողովը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան՝ Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի մասնակցությամբ:

ԳԱԱ նախագահ Ֆազեյ Սարգսյանը, բացելով գիտական նստաշրջանը, անդրադարձավ այն ճակատագրական դերին, որ ունեցել է մեսրոպյան գրերի գյուտը հայ ժողովրդի կյանքում:

Գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներին ուղերձ էր հղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Լավեց նաև Ն. Ս. Օ. Տ. Ս. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հայրապետական բարեմաղթության խոսքը:

Լիազույցար նիստում զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը («Մեսրոպ Մաշտոցի հոգևոր սխրանքը»), ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ-հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը («Գրերի գյուտը և հայ ինքնությունը»), Գեորգ Բարդակչյանը (ԱՄՆ) («Տառ, խոսք և միտք. համառոտ ակնարկ հայոց լեզվի և հայ մտքի ու մշակույթի փոխառնչությունների մասին»), Ալուստեղիազարյանը (Հայաստան) («Մեսրոպ Մաշտոցի կերպարը հայ դրականության մեջ»):

Գիտաժողովին մասնակցում էին արտասահմանյան 20 հայազետ (Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իտալիայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Ավստրիայից, Հունդարիայից, Բրազիլիայից), որոնցից 17-ը հանդես եկան գիտական զեկուցմամբ: Երկու զեկուցում ներկայացրեցին Ստեփանակերտի պետական համալսարանի գիտնականները:

Գիտաժողովը գործեց երեք մասնաճյուղով՝ Հայոց գրերի գյուտը և նրա պատմական նշանակությունը, Հայոց գրերի գյուտը և հայոց մշակույթը, Հայոց գրերի գյուտը և Հայ եկեղեցին: Մասնաճյուղերի նիստերը տեղի ունեցան սեպտեմբերի 13-ին, 14-ին, 15-ին ՀՀ ԳԱԱ նախագահության և ՀՀ ԳԱԱ պաամության ինստիտուտի նիստերի դահլիճներում:

«Հայոց գրերի գյուտը և նրա պատմական նշանակությունը» առաջին մասնաճյուղի նիստի ղեկավարն էր Վլադիմիր Բարխուդարյանը (Հայաստան), նիստի նախագահներն էին Բաբկեն Հարությունյանը (Հայաստան)

և Սերգեյ Մուրավյովը (Ֆրանսիա/Ռուսաստան): Ելույթներով հանգես եկան Արմեն Պետրոսյանը (Հայաստան)՝ «Տիր և Մաշտոց. դպրության աստվածը և գրերի ստեղծողը», Հայկ Հակոբյանը (Հայաստան)՝ «Մաշտոցի գործունեության մշակութաբանական հենքը», Ալբերտ Մուշեղյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը», Հայկ Հակոբյանը, Սիմոն Հմայակյանը (Հայաստան)՝ «Նախամաշտոցյան շրջանի արամեատառ կոթողների վերջին գյուտերը» թեմաներով:

Սեպտեմբերի 14-ի առաջին նիստում, որի նախագահն էր Արամ Քալանթարյանը (Հայաստան), ղեկուցումներով հանդես եկան Բաբկեն Հարությունյանը (Հայաստան)՝ «Հայոց գրերի ստեղծման թվականի շուրջ», Անահիտ Պետրոսյանը (Հայաստան)՝ «Բալո^ո, թե՞ Սամոսատ. ավանդական և պատմական հայացք հայոց գրերի ստեղծման վայրի մասին», Սերգեյ Մուրավյովը (Ֆրանսիա)՝ «Հայկական տառանվանումների ծագումը», Տորք Դալալյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցի կերպարի և անվան ծագումնաբանությունը», Գայանե Գևորգյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցը՝ հնչույթաբան», իսկ երկրորդ նիստում, որի նախագահներն էին Ազատ Եղիազարյանը (Հայաստան), Ռոբեր Տեր-Մերկերյանը (Ֆրանսիա), լսվեցին Արծրունի Սահակյանի (Հայաստան)՝ «Մաշտոցի անվ. Մատենադարանի մաշտոցագիտական ուսումնասիրությունների արդյունքները», Վրեժ Վարդանյանի (Հայաստան)՝ «Հայերեն գիրն ու գրականությունն իբրև հայ ժողովրդի ինքնապահպանման գործոն», Աելիտա Դոլուխանյանի (Հայաստան)՝ «Ֆրանսիական հայագետները մաշտոցյան գրերի մասին», Անի Փաշայանի (Հայաստան)՝ «Հայոց գրերի գյուտը ուս հայագետների աշխատություններում», Վիկտոր Տրուբնիկովի (Հայաստան)՝ «Հայոց գրերը և գրականությունը» ելույթները:

Սեպտեմբերի 15-ի առաջին նիստի նախագահներն էին Գևորգ Պողոսյանը (Հայաստան) և Ալբերտ Ստեփանյանը (Հայաստան): Զեկուցումներ կարդացին Ալբերտ Ստեփանյանը (Հայաստան)՝ «Ազգային ինքնության ինքնագրությունը», Մհեր Հարությունյանը (Արցախ)՝ «Հայոց գրերը՝ ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնագիտակցության ու յուրատիրություն պահպանման գրավական», Աննե Էլիզաբեթ Ռեդգեյթը (Մեծ Բրիտանիա)՝ «Ազգային գիրը, տեղական քրիստոնեությունը և ազգային ինքնությունը վաղմիջնագարյան Հայաստանում», Սեյրան Զաքարյանը (Հայաստան)՝ «Հայոց գրերի դերը ազգային ինքնության նոր հարացույցի ձևավորման գործում», Ռիմա Սիրումյանը (Հայաստան)՝ «Գրերի գյուտը որպես համազգային զարգացման ծրագրի հիմք և նախադրյալ»:

Սեպտեմբերի 15-ի երկրորդ նիստի նախագահներն էին Լավրենտի Բարսեղյանը (Հայաստան), Աննե Էլիզաբեթ Ռեդգեյթը (Մեծ Բրիտանիա): Զեկուցումներով հանդես եկան Հասմիկ Ա. Ստեփանյանը (Հայաստան)՝ «Հայատառ թուրքերենի դերը Օսմանյան կայսրության ժողովուրդների առաջընթացի մեջ», Ռոբեր Տեր-Մերկերյանը (Ֆրանսիա)՝ «Հայոց գրերի դերն այսօր՝ ստեղծումից 16 դար անց», Լուսինե Եղիազարյանը (Բրազիլիա)՝

«Մեսրոպյան գրերը և սփյուռքում հայապահպանության մի քանի հարցեր», Գևորգ Պողոսյանը (Հայաստան)՝ «Հայոց այբուբենը ժամանակակից հայ հասարակության ընկալմամբ», Ժիրայր Քոչարյանը (Գերմանիա)՝ «Հայոց գրերի գյուտի քաղաքական նշանակությունը»:

«Հայոց գրերի գյուտը և հայոց մշակույթը» երկրորդ մասնաճյուղի նիստերը սկսվեցին սեպտեմբերի 13-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում, որի ղեկավարն էր Սեն Արևշատյանը (Հայաստան): Նիստի նախագահներն էին Արարատ Աղասյանը (Հայաստան) և Աբրահամ Տերյանը (ԱՄՆ): Ելույթներ ունեցան՝ Կարեն Յուզբաշյանը (Ռուսաստան)՝ «Առաջին հայագիր մտավորականները», Գառնիկ Անանյանը (Հայաստան)՝ «V դարի հայ մատենագրության հրապարակախոսական ընդլայնում», Ժիրայր Դեղեյանը (Ֆրանսիա)՝ «Խաչակրաց արշավանքների ժամանակ հայկական այբուբենի գործածման վերաբերյալ դիտողություններ», Հրավարդ Հակոբյանը (Հայաստան)՝ «Մաշտոցյան գիրը նկարչուկայի մեջ», Համլետ Պետրոսյանը (Հայաստան)՝ «Ուսումնասիրի կերպարը և ուսումնասիրության թեման հայ միջնադարյան պատկերաքանդակում»:

Սեպտեմբերի 14-ի երկրորդ մասնաճյուղի առաջին նիստի նախագահներն էին Լավրենտի Հովհաննիսյանը (Հայաստան) և Բելա Գուլակյանը (Ռուսաստան): Ելույթներով հանդես եկան Հովհաննես Ջաքարյանը (Հայաստան)՝ «Ազգային գրերի գյուտը և հայոց լեզվաքաղաքականությունը», Հովհաննես Բարսեղյանը (Հայաստան)՝ «Երևան» տեղանվան ուղղագրությունը գրական արևելահայերենում և արևմտահայերենում», Նեկաար Սիմոնյանը (Հայաստան)՝ «Հին հայերենի հնդեվրոպական ծագման հոմանիշ բայերը», Հայկանուշ Մեսրոսյանը (Հայաստան)՝ «Հատուկ անուններով կազմված բարբառային ածականական հոմանիշներ», Անահիտ Աբրահամյանը (Հայաստան)՝ «Երկրագործական գործիքանիշ բառերը V դարի հայ մատենագրության մեջ և դրանց արտացոլումը հայերենի բարբառներում»: Նույն օրվա երկրորդ նիստի նախագահներն էին Ժիրայր Դեղեյանը (Ֆրանսիա) և Սերգո Հայրապետյանը (Հայաստան): Ելույթներով հանդես եկան Ջեմմա Բառնասյանը (Հայաստան)՝ «Հայոց հին ամսանունների ծագման հարցի շուրջ», Բելա Գուլակյանը (Ռուսաստան)՝ «Ը»-ի բնութագիրը և հայերենի ձայնավորների համակարգը», Էդիկ Ղաբուլյանը (Հայաստան)՝ «Հայկական համակարգչային տառատեսակների որակի գնահատման մի քանի չափանիշներ», Գրիգոր Վահանյանը (Հայաստան)՝ «Հայկական գաղափարագրերի (նշանագրերի) համակարգչային խմբագիր»:

Սեպտեմբերի 15-ի առաջին նիստի նախագահներն էին Գառնիկ Անանյանը (Հայաստան) և Թեո Մ. վան Լինտը (Մեծ Բրիտանիա): Ելույթներով հանդես եկան Աբրահամ Տերյանը (ԱՄՆ)՝ «Հավելյալ նկատումներ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ժանրի մասին», Հրաչիկ Միրզոյանը (Հայաստան)՝ «Գրիգոր Նարեկացին և հայոց գրերը», Թեո Մ. վան Լինտը (Անգլիա)՝ «Սիամանթոյի շարքը՝ նվիրված Սուրբ Մեսրոպին», Հայկանուշ Ջոբանյանը (Հայաստան)՝ «Հայերեն գրերը օտարալեզու գրականության ար-

տահայտման միջոց», Վերժինե Սվազլյանը (Հայաստան)՝ «Հայերի լեզվական իրավունքների ոտնահարումը Օսմանյան թուրքիայում»:

Սեպտեմբերի 15-ի երկրորդ նիստի նախագահներն էին Կարեն Յուզբաշյանը (Ռուսաստան) և Հրաչիկ Միրզոյանը (Հայաստան), որտեղ ելույթ ունեցան Լևոն Ասրյանը (Հայաստան)՝ «Կոմագենների գրավոր-մշակութային ակունքները», Սամվել Բաբայանը (Հայաստան)՝ «Մաշտոցյան երկու՝ հայկական և վրացական այբուբենների ստեղծման միևնույն սկզբունքը», Բենեդեկ Ժիգմոնդը (Հունգարիա)՝ «Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի լատիներեն թարգմանությունը», Կարինե Բազեյանը (Հայաստան)՝ «Հայոց ասեղնագործության հյուսածո արձանագրությունները» և հենց այս ելույթով էլ ավարտվեց երկրորդ մասնաճյուղի նիստերը:

«Հայոց գրերի գյուտը և հայ եկեղեցին» երրորդ մասնաճյուղի նիստերը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Ղեկավարն էր Ռիչարդ Հովհաննիսյանը (ԱՄՆ), նիստի նախագահներն էին Աշոտ Մելքոնյանը (Հայաստան) և Քրիստիան Հաննիկը (Գերմանիա): Զեկուցումներով հանդես եկան Մեսրոպ արքեպիսկոպոս Գրիգորյանը (Ավստրիա)՝ «Մեսրոպ Մաշտոց. գինվորական ծառայությունից հոգևոր ծառայություն», Ալեքսան Հակոբյանը (Հայաստան)՝ «Մաշտոցի երկրորդ հյուսիսային ուղևորության ժամանակը և խնդիրները», Սարգիս Հարությունյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցի վերաբերմունքը հայ աղանդավորության նկատմամբ», Վահրամ Բալայանը (Արցախ)՝ «Հայոց Արևելից կողմանց եկեղեցու պայքարը աղանդավորական հոսանքների և քաղկեդոնականության դեմ V–VIII դարերում», Հայկ Հարոյանը (Հայաստան)՝ «Հայ եկեղեցին որպես էթնոմշակութային խորհրդանշան»:

Սեպտեմբերի 14-ի երրորդ մասնաճյուղի առաջին նիստի նախագահներն էին Մեսրոպ արք. Գրիգորյանը (Ավստրիա) և Վարադ Ներսիսյանը (Հայաստան): Ելույթներ ունեցան Ազատ Բոգոյանը (Հայաստան)՝ «Հայոց գրերի գյուտը և հայ եկեղեցական պատմագրության սկզբնավորումը», Էմմա Կոստանդյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցն ու գրերի գյուտը Մաղաքիա Օրմանյանի գնահատությունում», Ռոման Կարիկովը (Ռուսաստան)՝ «Հունական մշակույթի նշանակությունը հայկական և սլավոնական (հին ռուսական) գրերի ստեղծման համար. պատմափիլիսոփայական տեսանկյուն», Հելմուտ Բուշհուզենը (Ավստրիա)՝ «Ավետարանի մեսրոպյան թարգմանության վերականգնման փորձ», Արմեն Տեր-Սահփանյանը (Հայաստան)՝ «Աստվածաշնչի կանոնի հարցի շուրջ» թեմաներով: Երկրորդ նիստը սկսվեց կեսօրին: Նիստի նախագահներն էին Պողոս Լևոն Զեքիյանը (Իտալիա), Էմմա Կոստանդյանը (Հայաստան): Նիստում ելույթներ ունեցան Աննա Արևշատյանը (Հայաստան)՝ «Հայոց գրերի գյուտը և ազգային սլաշտոններդության ձևավորումը», Մհեր Նավոյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցը և հայ հիմնեղբույրների ձևավորման հարցերը», Վարդան Դևրիկյանը (Հայաստան)՝ «Արքոց թարգմանչաց եկեղեցական կանոնի և տոնի ձևավորումը», Վարադ Ներսիսյանը (Հայաստան)՝ «Շարական» թարգմանչաց կանոնը» թեմաներով:

Սեպտեմբերի 15-ի երրորդ մասնաճյուղի առաջին նիստի նախագահներն էին Սարգիս Հարությունյանը (Հայաստան) և Գևորգ Բարդակչյանը

(ԱԼՄՆ): Ելույթ ունեցան Մանե (Էռնա) Շիրինյանը (Հայաստան)՝ ««Գիրք պատճառացի» վկայությունները Հայոց գրերի գյուտի վերաբերյալ», Մաքսիմ Եվադյանը (Ֆրանսիա)՝ «Ս. Գրիգոր Լուսավորչի ծագումնաբանության մասին», Քնարիկ Տեր-Դավթյանը (Հայաստան)՝ «Հայ սրբախոսության երախայրիք «Հռիփսիմյանց վկայաբանությունը» և նրա գրական արժեքը», Քրիստիան Հաննիկը (Գերմանիա)՝ «Հայալեզու տերմինները Հայերի հետ բյուզանդական միջնադարյան բանավեճում», Սուսաննա Գրիգորյանը (Հայաստան)՝ «Առական գրքի» միջնադարյան մեկնությունները: Երկրորդ նիստի նախագահներն էին Հելմուտ Բուշհաուզեն (Ավստրիա) և Աննա Արևշատյանը (Հայաստան): Ելույթներով հանդես եկան Օլգա Վարդադարյանը (Հայաստան)՝ «Ակումիտ» և «Սպուդեք» բառերը Մեսրոպ Մաշտոցին վերաբերող սկզբնաղբյուրներում», Գայանե Պողոսյանը (Հայաստան)՝ «Հայոց գրային համակարգի միջնադարյան բնագիտական բացատրությունները», Հռիփսիմե Պիկիջյանը (Հայաստան)՝ «Գրի և գրքի հետ կապված ծիսակարգը Հայոց ավանդույթում», Հասմիկ Հ. Ստեփանյանը (Հայաստան)՝ «Հայոց գրերի գյուտը երաժշտատեսական խնդիրների համատեքստում», Անահիտ Բաղդասարյանը (Հայաստան)՝ «Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի շարականները կոմպոզիտոր Երվանդ Երկանյանի բազմաձայն մշակմամբ»:

Սեպտեմբերի 16-ին ՀՀ ԳԱԱ նախադահույթյան նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողովի լիագումար նիստը և փակումը: Գիտաժողովը քննարկեց Հայոց լեզվի ու նրա զարգացման հիմնախնդիրները, Հայոց լեզվի նշանակությունը Հայ ինքնության պահպանման, դիտամշակութային կյանքի զարգացման գործում և բազմաթիվ այլ հարցեր: Լսվեցին մասնաճյուղերի ղեկավարների հաղորդումները քննարկումների արդյունքներին:

Գիտաժողովի շրջանակներում նախատեսված էին նաև մշակութային միջոցառումներ, այդ թվում այց Օշական, ծաղկեպսակի դրման արարողություն Մեսրոպ Մաշտոցի շիրիմին: